ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

«28» «սեպտեմբեր» 2026 թվական № 634-Լ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 10-Ի N 128-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածով, վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 745-Լ որոշման հավելվածի 26-րդ կետի 11-րդ ենթակետով, Հայաստանի Հանրապետության առաջին փոխվարչապետի 2019 թվականի հունվարի 11-ի N 3-Ն որոշման հավելվածի 12-րդ կետի 4-րդ ենթակետով և հիմք ընդունելով շրջակա միջավայրի նախարարության ֆինանսատնտեսական վարչության պետի պարտականությունները կատարող Լ. Սինանյանի 2026 թվականի սեպտեմբերի 22-ի և շրջակա միջավայրի նախարարության վտանգավոր նյութերի և թափոնների քաղաքականության վարչության պետի 2026 թվականի սեպտեմբերի 23-ի զեկուցագրերը.

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Շրջակա միջավայրի նախարարության գլխավոր քարտուղարի 2020 թվականի ապրիլի 10-ի «Շրջակա միջավայրի նախարարության քաղաքացիական ծառայության պաշտոնների մասնագիտական գիտելիքների շրջանակը և աղբյուրները սահմանելու մասին» N 128-Լ հրամանում կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունները.

1) հրամանի 1-ին կետում կատարել հետևյալ լրացումները.

«274) Շրջակա միջավայրի նախարարության ֆինանսատնտեսական վարչության հաշվապահական հաշվառման բաժնի ավագ հաշվապահ (ծածկագիր՝ 15-33.2-Մ2-22)՝ համաձայն N 274 հավելվածի.

275) Շրջակա միջավայրի նախարարության վտանգավոր նյութերի և թափոնների քաղաքականության վարչության գլխավոր մասնագետ (ծածկագիր՝ 15-32.11-Մ2-4)՝ համաձայն N 275 հավելվածի:»:

2) Ուժը կորցրած ճանաչել հրամանի 1-ին կետի 89-րդ և 181-րդ ենթակետերը:

9/28/2026

X

ԱՐԿԱԴԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Signed by: KHACHATRYAN ARKADI 2901780121

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ Ա.ԽԱՉԱՏՐՅԱՆ

Երևան

Հավելված N 274
Շրջակա միջավայրի նախարարության
գլխավոր քարտուղարի
2026թ. սեպտեմբերի « » -ի N -Լ հրամանի

«Հավելված N 274
Շրջակա միջավայրի նախարարության
գլխավոր քարտուղարի
2020թ. ապրիլի 10-ի N 128-Լ հրամանի

Շրջակա միջավայրի նախարարության ֆինանսատնտեսական վարչության հաշվապահական հաշվառման բաժնի ավագ հաշվապահի (ծածկագիր՝ 15-33.2-Մ2-22) համար սահմանվող մասնագիտական գիտելիքների շրջանակը և աղբյուրները

1. Իրավական գիտելիքներ

1) Շրջակա միջավայրի նախարարության գործունեության ոլորտը կարգավորող և տվյալ պաշտոնի առանձնահատկություններից բխող օրենքների իմացություն՝

ա) Սահմանադրություն.
բ) «Հանրային ծառայության մասին» օրենք.
գ) «Քաղաքացիական ծառայության մասին» օրենք.
դ) «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենք.
ե) «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքը.
զ) «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենք
է) «Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին» օրենք
ը) «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենք
թ) «Գանձապետական համակարգի մասին» օրենք,
ժ)Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգիրք.
ժա) Հարկային օրենսգիրք.
ժբ) «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենք.

2) Շրջակա միջավայրի նախարարության գործունեության ոլորտը կարգավորող և տվյալ պաշտոնի առանձնահատկություններից բխող ենթաօրենսդրական ակտերի իմացություն՝

ա) Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018թ. հունիսի 11-ի «Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարության կանոնադրությունը հաստատելու մասին» N 745-Լ որոշում.

բ) Շրջակա միջավայրի նախարարության ֆինանսատնտեսական վարչության կանոնադրություն.

գ) Հայաստանի Հանրապետության կառավարության 2018թ. նոյեմբերի 8-ի թվականի «Քաղաքացիական ծառայողի ծառայողական գործուղման պայմաններն ու կարգը սահմանելու մասին» N 1239-Ն որոշում.

դ) Հայաստանի Հանրապետության կառավարության 2012թ. դեկտեմբերի 27-ի «Սոցիալական փաթեթի հատկացման կարգը և փաթեթի մեջ մտնող ծառայությունների բովանդակությունը հաստատելու մասին» N 1691-Ն որոշում.

ե)Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի «Գործուղման մեկնած աշխատողների գործուղման ծախսերի հատուցման համար կատարվող վճարումների նվազագույն և առավելագույն չափերն ու վճարման օտարերկրյա պետություններ ուսման կամ ծառայության գործուղված Հայաստանի Հանրապետության պաշտպանության

նախարարության համակարգի զինծառայողի և նրա ընտանիքի անդամների, օտարերկրյա պետությունում գործող դիվանագիտական ծառայության մարմին ծառայության մեկնող դիվանագետի և նրա ընտանիքի անդամների՝ Հայաստանի Հանրապետությունից օտարերկրյա պետություն մեկնելու կամ օտարերկրյա պետությունից Հայաստանի Հանրապետություն վերադառնալու տրանսպորտային ծախսերի, ինչպես նաև օտարերկրյա պետությունում բնակելի տարածության վարձակալության համար դրամական փոխհատուցման կարգերն ու չափերը հաստատելու մասին N 2335-Ն որոշում.

զ)Հայաստանի Հանրապետության կառավարության 2011թ. մարտի 3-ի «Պետության սեփականություն հանդիսացող բաժնեմաս ունեցող առևտրային կազմակերպությունների շահույթի բաշխման, շահութաբաժինների հաշվարկման և Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001թ. դեկտեմբերի 5-ի N 1194 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին » N 202-Ն որոշում.

է) Հայաստանի Հանրապետության կառավարության 2018թ. նոյեմբերի 15-ի «Քաղաքացիական ծառայողին արձակուրդ տրամադրելու կարգը և պայմանները սահմանելու մասին»N 1287-Ն որոշում.

ը) Հաշվապահական հաշվառման ոլորտին առնչվող և ոլորտը կարգավորող Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումներ, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի հրամաններ, պարզաբանումներ, ինչպես նաև այլ նորմատիվ-իրավական ակտեր և ենթաօրենսդրական փաստաթղթեր:

2. Այլ գիտելիքներ

1) **Համակարգչից և այլ տեխնիկական միջոցներից օգտվելու համար անհրաժեշտ ծրագրերի իմացություն՝**

ա) Ինֆորմատիկա 7-րդ դասարան: Դասագիրք հանրակրթական դպրոցի համար: Ս.Ս.Ավետիսյան, Ա.Վ.Դանիելյան: Մասնագիտական խմբագիր՝ Ռ.Վ. Աղգաշյան: Երևան 2012:
http://fliphtml5.com/fumf/egdx

բ) Ինֆորմատիկա 8-րդ դասարան: Հանրակրթական ավագ դպրոցի ընդհանուր և հումանիտար հոսքերի համար: Ս.Ս.Ավետիսյան, Ա.Վ.Դանիելյան: Մասնագիտական խմբագիր՝ Ռ.Վ. Աղգաշյան: Երևան 2013:
http://online.fliphtml5.com/fumf/irey/#p=2

գ) ՀԾ-Հաշվապահական համակարգ՝ հանրային հատված:
http://www.armsoft.am/?p=hc_usumanakan_kentron&c=usucum&lang=am

2) **Գործնական գրագրության, փաստաթղթերի, գրավոր տեքստերի գրագետ շարադրման սկզբունքների և կանոնների իմացություն**

ա) «Գրավոր խոսք», Վազգեն Գաբրիելյան, երրորդ լրամշակված հրատարակությունուն, Լիմուշ հրատարակչություն, Երևան 2012 թ., էջեր՝ 70-129,

http://www.parliament.am/library/books/gravor-khosq.pdf

Հավելված 275
Շրջակա միջավայրի նախարարության
գլխավոր քարտուղարի
2026թ. սեպտեմբերի « » -ի N -Լ հրամանի

«Հավելված N 275
Շրջակա միջավայրի նախարարության
գլխավոր քարտուղարի
2020թ. ապրիլի 10-ի N 128-Լ հրամանի

Շրջակա միջավայրի նախարարության վտանգավոր նյութերի և թափոնների քաղաքականության վարչության գլխավոր մասնագետի (ծածկագիր՝ 15-32.11-Մ2-4) համար սահմանվող մասնագիտական գիտելիքների շրջանակը և աղբյուրները

1. Իրավական գիտելիքներ

1) Շրջակա միջավայրի նախարարության գործունեության ոլորտը կարգավորող և տվյալ պաշտոնի առանձնահատկություններից բխող օրենքների իմացություն՝

ա) Սահմանադրություն.
բ) «Հանրային ծառայության մասին» օրենք.
գ) «Քաղաքացիական ծառայության մասին» օրենք.
դ) «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենք.
ե) «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքը.
զ) «Թափոնների մասին» օրենք.
է) «Սնդիկի մասին» օրենք:

2) Շրջակա միջավայրի նախարարության գործունեության ոլորտը կարգավորող և տվյալ պաշտոնի առանձնահատկություններից բխող ենթաօրենսդրական ակտերի իմացություն՝

ա) «Վտանգավոր թափոնների անդրսահմանային փոխադրման և դրանց հեռացման նկատմամբ հսկողություն սահմանելու մասին» Բազելի կոնվենցիա.
բ) «Կայուն օրգանական աղտոտիչների մասին» Ստոկհոլմի կոնվենցիա.
գ) «Միջազգային առևտրում առանձին վտանգավոր քիմիական նյութերի և պեստիցիդների վերաբերյալ նախնական հիմնավորված համաձայնության ընթացակարգի մասին» Ռոտերդամի կոնվենցիա.
դ) «Արդյունաբերական վթարների անդրսահմանային ներգործության մասին» կոնվենցիա.
ե) «Սնդիկի վերաբերյալ» Մինամատայի կոնվենցիա.
զ) Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի ապրիլի 20-ի «Թափոնների գոյացման, վերամշակման և օգտահանման օբյեկտների ռեեստրի վարման կարգը սահմանելու մասին» N 500-Ն որոշում.
է) Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հուլիսի 13-ի «Թափոնների հեռացման վայրերի ռեեստրի վարման կարգը սահմանելու մասին» N 1180-Ն որոշում.
ը) Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի նոյեմբերի 11-ի «Հայաստանի Հանրապետության արդյունաբերական օբյեկտի անվտանգության վկայագրի կանոնադրությունը հաստատելու մասին» N 702 որոշում.

թ) Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի «Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարության կանոնադրությունը հաստատելու մասին» N 745–Լ որոշում.

ժ) Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունվարի 19-ի «Թափոնների անձնագրավորման կարգը սահմանելու մասին» N 47-Ն որոշում.

ժա) Շրջակա միջավայրի նախարարության վտանգավոր նյութերի և թափոնների քաղաքականության վարչության կանոնադրություն:

2. Այլ գիտելիքներ

1) Համակարգչից և այլ տեխնիկական միջոցներից օգտվելու համար անհրաժեշտ ծրագրերի իմացություն՝

ա) Ինֆորմատիկա 7-րդ դասարան: Դասագիրք հանրակրթական դպրոցի համար: Ս.Ս.Ավետիսյան, Ա.Վ.Դանիելյան: Մասնագիտական խմբագիր՝ Ռ.Վ. Աղգաշյան: Երևան 2012:
http://fliphtml5.com/fumf/egdx

բ) Ինֆորմատիկա 8-րդ դասարան: Դասագիրք հանրակրթական դպրոցի համար: Ս.Ս.Ավետիսյան, Ա.Վ.Դանիելյան: Մասնագիտական խմբագիր՝ Ռ.Վ. Աղգաշյան: Երևան 2013:
http://online.fliphtml5.com/fumf/irey/#p=2

2) Լեզուների իմացություն

Ռուսերենին տիրապետում է ազատ
Անգլերեն՝ կարդում և կարող է բացատրվել.

3) Գործնական գրագրության, փաստաթղթերի, գրավոր տեքստերի գրագետ շարադրման սկզբունքների և կանոնների իմացություն

ա) «Գրավոր խոսք», Վազգեն Գաբրիելյան, երրորդ լրամշակված հրատարակությունուն, Լիմուշ հրատարակչություն, Երևան 2012 թ., էջեր՝ 70-129:

http://www.parliament.am/library/books/gravor-khosq.pdf